

դասիւ ի վերայ Ս. Երուսաղեմայ կողկողագին պատասմօփ, շարով եւ մեծաւ ողբով ծանոցին զխնայեալ քշուտութիւնն յԵրուսաղեմայ սուրբ եւ առաքելաշէն Ս. Աթոռոյն Ս. Յակոբայ վանացն վեր եւ այլ գերահռչակ ս. սկօրիկական տեղաց մասին մերոյ, որ հոռումն եւ փռանկն կու պատեն առնուլ եւ ինկեանց գրաւել վասն կարի եւ առաւել վերջին աղբասութեան եւ չղարութեանն: Եւ այսպիսի մեծականական ողբով կակղացուցին, շնորհօքն Քրիստոսի ի հաւանութիւն ամին, որ Կարապետ անուն խօնայ մի եօթն բնուն ստակ եր տուել եւ այլք՝ երկու եւ այլք՝ մի մի բնու եւ այլքն՝ ըստ կարեաց» (Իււաղէ, էջ 324-5):

Այսպէս սրտացաւ վարդապետ մը աջակցութեամբ ուրիշ կարող ու ազդեցիկ եկեղեցականի մը, Վանի եւ Բաղէշի շրջանակին մէջ ինքնաբերաբար Երուսաղէմի վանքին պարտուց համար հանգանակութեան ձեռնարկած էին, ազդուելով տնոր տեսածներէն:

Գրիգոր Կեսարացի՝ ինքն ալ ճարպիկ եւ ձեռներէց եկեղեցական մը՝ անտարբեր չմնաց, եւր Երուստղէմի դժբախտ վիճակին ինքն ալ ականատես եղաւ: Ինքն ալ ուզեց դարձան մը տանիլ: Ահա այդ դարձանը որոնելու համար էր որ ապահովաբար անիկա գնաց Տիարպէքիր: